Վահան Տերյան

Անդարձ աշխարհի վարդագույն միգում

Անդարձ աշխարհի վարդագույն միգում.
Կյանքի հեռավոր, երազ օրերում,
Մի խորհրդավոր թախիծ էր հսկում,
Մի կարոտ էր իմ սիրտը դեգերում,
Կյանքի հեռավոր, երազ օրերում…

Եվ խավար կյանքի արտուղիներում,
Օտար կողմերի դաշտերում մեռած
Ժպտացին հոգուս՝ դեմքդ երերուն
Եվ քո խոսքերը արծաթե երազ,
Օտար կողմերի դաշտերում մեռած…

Եվ դժգույն կյանքի տխուր երգերում
Իր ցոլքն է նետել քո հոգին պայծառ,
Քո անհաս փայլն է իմ հոգին այրում
Եվ գիշերներիս խավարում անծայր
Կանչում է դեպի անհայտ քո հեռուն…

1909